

դոնի կայսրության հիմնադրման (1204—1206 թթ.) յուրահատկությունները՝ թեմայով՝ Տ. Քույումջյանը (Փարիզ) խոսեց Զամագուտայի հայկական եկեղեցու որմնակարների մասին, Մ. Դ. Լորդկիրիանիձեի (Թբիլիսի) ղեկուցումը վերնագրված էր՝ «Բյուզանդա-վրացական փոխհարաբերությունների պատմությունից XI դարի 70-ական թթ. և Մամոնիսի (Աթենք) ղեկուցումը նվիրված էր Գրիգոր Բակուրյանի կանոնադրության հունարեն բնագրի ուսումնասիրությանը՝ լեզվաբանական առումով, Թ. Վիրցի (Ֆլորենցիա) ղեկուցումը կրում էր հետևյալ խորագիրը. «Միջին զերմաներենի խոսակցականում ketzer (հերետիկոս), միջին լատիներենի՝ cathari անվան ծագումն ու նշանակությունը XII—XIII դդ. բյուզանդական-բուլղարական-հայկական բողոմիլյների պովիլիկյանների առնչությամբ»։ Պ. Զեքիյանի (Միլան) ղեկուցման նյութն էր՝ «Կաթոլիկոս Ներսես Ենոք՝ հալու և կայսերական նվիրակ Թեոփանոսի բանակցությունները հայկական և բյուզանդական եկեղեցիների միության տեսակետից»։

«Արվեստ և հնագիտություն» բաժնում ևս լավեցին բազմաթիվ հաղորդումներ, որոնցից հայագիտության համար այս կամ այն լավով կարևորություն ունեն հետևյալները. Ս. Բոյաջիև (Սոֆիա) — «Նոր տվյալներ Բաշկովոյի ոսկրադարանի վերաբերյալ»։ Նույն հուշարձանի որմնակարներին էր նվիրված Ա. Դ. Գրիշինի (Կանրերա) ղեկուցումը։ Մ. Մունդելի (Օբսֆորդ) ղեկուցումը վերաբերում էր Միջագետքում, Մերդինի մոտ գտնվող Դեր Զաֆերանի վանքի VI դարի քանդակներին։ Ն. Թինրիի (Փարիզ) ղեկուցումը վերնագրված էր. «Քորայրի կաթոլիկների (XII դարի երկրորդ կես) վրացական անտիպ որմնակարները»։ Հ. Զանփուլադյանի (Լենինգրադ) ղեկուցումը վերաբերում էր ՍՍՀՄ սահմաններում հայտնաբերված բյուզանդական ապակուն։

Բազմաթիվ հաղորդումներ եղան վերջին տարիներին հնագիտական պեղումների ժամանակ

հայտնաբերված հուշարձանների մասին, առանձին հուշարձանների նարտարապետական ձևերի, պատկերազրության, քանդակազորություն, ինչպես և բրտագործության, ջուլհակության, ձեռագրերի, մանրանկարների մասին (ոչ միայն Բյուզանդիայում, այլև նրա հարևան և ոչ հարևան երկրներում՝ Սերբիայում, Բուլղարիայում, Ռումինիայում, Ռուսաստանում, Բուլղարիայում, Եվեդիայում), ձեռագրերի սովետական ժողովածուների (Վ. Դ. Լիսաշևա, Լենինգրադ), մանր արվեստների (Ա. Վ. Բանկ, Լենինգրադ), բյուզանդական երաժշտության տարբեր հարցերի, հարևան ժողովուրդների վրա բյուզանդական արվեստի ունեցած ազդեցության վերաբերյալ։

Հատուկ մի նիստում տարբեր երկրներից մի շարք հայտնի մասնագետներ (Պ. Լըմերլ, Ա. Պերտուգի, Հ. Հունգեր, Բ. Լ. Ֆոնկիշ, Յ. Իրմշեր, Լ. Վրանուսիս և ուրիշներ) ղեկուցեցին բյուզանդական սկզբնաղբյուրների բնագրերի և թարգմանությունների, բառարանների, հանգագիտարանների հրատարակությունների, տարբեր երկրներում բյուզանդագիտության արդի վիճակի մասին և այլն։

Բաժինների առավոտյան նիստերից հետո կայացան պլենար նիստեր, որտեղ հայտնի բյուզանդագետներ (Ս. Ռանսիմեն, Հ. Բեք, Կ. Վալցման) Բյուզանդիայի պատմության ու արվեստի առանձին մեծ հարցերին նվիրված ղեկուցումներ կարդացին։

Կոնգրեսի աշխատանքներն ամփոփեց բյուզանդագետների միջազգային ասոցիացիայի պատվավոր պրեզիդենտ Պ. Լըմերլը (Փարիզ)։ Հիշյալ ասոցիացիայի նիստում նոր պրեզիդենտ ընտրվեց Հ. Հունգերը (Ավստրիա), զբաղավոր քարտուղար՝ Մ. Նաձիգակիսը, վիցե-պրեզիդենտների թվում՝ Զ. Վ. Ուդալցովան (ՍՍՀՄ)։ Որոշվեց բյուզանդագետների միջազգային XVI կոնգրեսը գումարել Վիեննայում։

Հ. ԲԱՐԹԻՎԱՆ

ԱՆԻՒ Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԱՐՁԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անիի Ս. Փրկիչ եկեղեցին ունի շինարարական երկու արձանագրություն, որոնցից մեկը թվագրված է ՆՁԴ (1035), մյուսը՝ ՆՁԵ (1036) թվականով։ Երկուսն էլ գրված են Պահլավունյաց տոհմի ներկայացուցիչներից մեկի՝ երկրի մարդպան Ապղարիի անունից։



1036 թ. արձանագրությունը ժամանակի ըն-

թացքում մեծապես խաթարվել է։ Մեր այս հաղորդման համար հիմք է ծառայել Հայաստանի պատմության պետական թանգարանում պահվող մի լուսանկարը (տե՛ս նկարները)։

1 Այդ նկարը կատարված է Հ. Քյուրբչյանի կողմից 1880—1890-ական թթ.։ Թանգարանում պահվում է 1637 թվահամարի տակ։

Արձանագրությունն առաջին անգամ հրատարակել է Մ. Բժշկյանը²։ Սակայն հրատարակել է միայն առաջին տասնմեկ տողերը։ Բժշկյանի ճշտությունը հաստատում են լուսանկարի վրա երևացող խաթարված տառերի մանրամասները։ Ս. Զալալյանցի մոտ ևս արձանագրությունը լրիվ չէ, ընդհատվում է 16-րդ տողի կեսին³։ Ն. Սարգիսյանը հրատարակել է

արձանագրության վերին յոթ տողը կրող քարերը, որի լուսանկարը՝ կատարված, հավանաբար, Արամ Վրույրի կողմից⁴, գետեղվել է «Դիվան հայ վիմագրության» առաջին պրակում։ Այդ պատճառով Օրբելին 7-րդ տողի շարունակության համար հիմք է ընդունել Ալիշանի վերծանությունը։ Այժմ, օգտվելով արխիվի լուսանկարից և նկատի ունենալով



մինչև 18-րդ տողը⁵, սակայն բացակայող կամ վնասված հատվածները վերականգնելու փորձ չի կատարել։ Հիմք ունենալով այս հրատարակությունները, Ղ. Ալիշանը վերականգնել է 15-րդ և 17-րդ տողերի սկիզբը⁶։ Ալիշանի մոտ արձանագրությունն ավարտվում է 18-րդ տողի կեսին։ Մասնակի լրացումներով արձանագրությունը հրատարակել է նաև Հ. Օրբելին⁶, և նույնպես մինչև 18-րդ տողի կեսը։ Օրբելու ժամանակ տեղում գոյություն ունեին միայն

Բժշկյանի հրատարակությունը, ինչպես նաև Ալիշանի ու Օրբելու վերականգնումները, փորձենք ամբողջացնել արձանագրությունը։

Բացակայող ձախակողմյան քարի հատվածում յուրաքանչյուր տող պարունակել է 5—6 տառ։ 7-րդ տողի վերջում մնացել է 2-ի բառակիրը։ Ելնելով արձանագրության բովանդակությունից, շարունակությունը, այսինքն՝ 8-րդ տողի սկիզբը, Օրբելին վերականգնել է ՁԻԹԶԱՅՐ բառով։ Բժշկյանի մոտ գրված է ՁԻԹԶԱՆՔ։ Կարծում ենք, որ սա ավելի հավաստի է։ 9-րդ և 10-րդ տողերի սկզբում, ըստ Բժշկյանի, եղել են ՂԱՐԴԱՐԵՑԻ և ՊԱՏԻՆԱԿԱՆ ԱՆՔ բառերը։ 10-րդ տողի վերջում մնացել են բառասկզբի երեք տառերը՝ ՆՈՐ, որոնք, ըստ Բժշկյանի, 11-րդ տողում շարունակվել են՝ ՆՈՐԻՆԻՆԻ 2]ին։ Այստեղ էլ ավարտվում է Բժշկյանի հրատարակածը։ 12-րդ տողի սկզբին Օրբելին վերականգնել է ՍՈՒՐԲ բառը։ 13-րդ տողի սկիզբը, ուր նույնպես պահանջվում է վեց տառ, նախորդ հրատարակող-

2 Մ. Բժշկյանց, Ծանապորհորդութիւն ի Լեհաստան և յայլ կողմանս բնակեալս ի հայկազանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքին, Վենետիկ, 1830, էջ 73։

3 Ս. Զալալյանց, Ծանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Տփլիս, 1858, էջ 8։

4 Ն. Սարգիսյան, Տեղագրությունք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 121—122։

5 Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 82—83։

6 «Դիվան հայ վիմագրության», պրակ I, կազմեց Հ. Ա. Օրբելի, Երևան, 1966, էջ 44—45։

7 Հայաստանի պատմության պետական թանգարանի ֆոտոտեկա, № 4697։

ները վերականգնել են ի ՍՊԱՍՈՒՑՍ, որը համոզիչ չէ: Շարադրանքն այստեղ այսպիսին է. «Արդ եթե ոք ի մեծաց կամ ի փոքունց... սպասուցս եւ կամ յայլ իրացս որ ետու...»: Ինչպես տեսնում ենք նախադասության մեջ պակասողը բայն է: Այդ պատճառով կարծում ենք, որ պետք է լրացվի [հլէ ի ՍՊ]ԱՍՈՒՑՍ եի ԿԱՄ ՅԱՅԼ ԻՐԱՑՍ: «[ի սպ]ասուցս» վարկածով չի լրացվում նաև տառերի պահանջվող քանակը: 13-րդ տողի վերջում փոքագրված է ՅԱՓՇՏԱ... կիսատ բառը: 14-րդ տողի պահանջված հատվածում մնացել են ԻՍ տառերը: Ելնելով բովանդակությունից, 14-րդ տողի սկիզբը կարելի է վերականգնել ՅԱՓՇՏԱ[Կ ԱՆՈՂ]ԻՍ: 15-րդ տողի բացակայող հատվածն Ալիշանը վերականգնել է [ՅԵՏ ԵԼԻՑ] ձևով, որը միանգամայն համոզիչ է: 16-րդ տողի սկզբին եղած բառից նախորդ տողում մնացել է Ե սկզբնատառը, և մեկուկես տառ էլ տողի պահանջված հատվածում: Լուսանկարից երևում է, որ այդ վերջնատառի վերին մասը եղել է կորնթարդ, իսկ աջ կողմից ստեղին միացված է հորիզոնական ելուստ: Տառաձևերի հետ համեմատությունը ցույց է տալիս, որ դա պետք է Դ կամ Ռ լինի, ուստի այդ հատվածը հնարավոր ենք գտնում վերականգնել [ԵԿԵՂԵՑՈՅ]Դ ԶՎԱՐԴԵՎԱՐԻՆ ձևով: 2. Օրբելին վերականգնել է ԵԿԵՂԵՑԻՈՅՍ, որը վերջնատառի նշված մնացորդով չի հաստատվում: Ի դեպ, ՎԱՐԴԵՎԱՐԻՆ

բառը բոլոր հրատարակողների մոտ բերված է ՎԱՐԴԵՎԱՐԻՆ ձևով: Հաջորդ՝ 17-րդ տողն ամենավնասվածն է: Պահանջված մասի սկզբի մի քանի տառ քարի կոտրվածքի պատճառով անհետացել են: Այս հատվածն Ալիշանը վերա-

կանգնել է ՄԻՆ[ԶԵԻ Ի ԳԱԼՈՒՍ]ՏՆ ՔԻ, որը նույնպես առարկություն չի ընդունում: Սակայն այս տողի մեջ առավել չափով վնասված է երկրորդ կեսը, ուր պահանջվել են առանձին տառերի մնացորդներ: Դրանց հիման վրա, ելնելով բովանդակությունից, վերականգնում ենք Զ[ՄԵ]ԶՆ Զ[ՐԱ]Դ ԱՐԵՑԻՆ: 18-րդ տողի սկզբին, ըստ բովանդակության պետք է լինի [ՅԱՆՈՒՆ] ՈՐԴԻՈ: Այս տողի կեսից սկսած նախորդ հրատարակողները չունեն: 19-րդ տողից պահանջվել է միայն վերին կեսը. 18-րդ տողը կարդացվում է այսպես՝ [ՅԱՆՈՒՆ] ՈՐԴԻՈ ԳԱԳԱՍ ՍՄՊԱՏԱ ՇԱՀՆՇԱՀԻ ԱՐՈՅՆ: 19-րդ տողը՝ [ԵԹԵ ՈՔ] ԳՐՈՒԱԾՍ ԻՄՈ ԶԱՌՆԷ ԵՐԻՍ ԱՆԻՄԻՑԴ ՊԱՐՏԱ... Արձանագրության 19-րդ տողի բովանդակությունից երևում է, որ այն ավարտվել է 20-րդ տողում: Ելնելով 19-րդ տողի վերջում պահանջված անավարտ բառից և բանաձև դարձած արտահայտություններից⁸, 20-րդ տողն առաջարկում ենք՝ [ԿԱՆ ԼԻՑԻ ԻՍԿ ԿԱՏԱՐԻԶ ԳՐԻՍ ԱԻՐՀՆԵԱԼ ԼԻՑԻ] ԱՄԵՆ:

Ամբողջությամբ վերականգնված արձանագրությունը հետևյալ բովանդակությունն ունի.

1. ՅԱՄՍ ԱԾԱՊԱՏԻԻ ԵԻ ՀՈԴԵԻՈՐ ՏՆ ՊԵՏՐՈՍԻ ՀԱՅ-
2. ՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵԻ Ի ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵԱՆ ՍՄԲԱՏԱ,
3. ՈՐԴԻՈ ԳԱԳԱՍ ՇԱՀՆՇԱՀԻ Ի ՆԶԵ (1036) ԲՈՒԱԿԱՆԻՍ, ԵՍ ԱՊԼ-
4. ՂԱՐԻՊ ՄԱՐԶՊԱՆ ՈՐԴԻ ԳՐԻԳՈՐՈ ԻՇԽԱՆԻ ԵԻ ԹՈՒՆ ԱՊՈՒ-
5. ՂԱՄՐԻ ԵԻ ԵՂԲԱՅՐ ՎԱՀՐԱՄԱ ԵԻ ՎԱՍԱԿԱ ՇԻՆԵՑԻ ԶՍՈՒՐԲ ՓՐԿԻ-
6. ԶՍ Ի ՄԱՅՐԱՔԱՂԱՔՍ ՅԱՆԻ ՇԱՏ ԶԱՆԻԻ ԵՎ ՄԵԾԱԾԱԽ ԳԱՆ-
7. ԶԻԻ ԵԻ ԳՆԵՑԻ ՀԱԼԱԼ ԸՆԶԻՑ ԻՄՈՅ ԿՈՒՂՊԱԿԱՆԻ :Գ: ԵԻ ԶԻ-
8. [ԹՀԱՆՔ] ԵԻ ԱՅԳԻ ԵԻ ՀՈՂԵԱՐ ԵԻ ԵՏՈՒ Ի ՄԲ ՓՐԿԻԶՍ, ԵԻ
9. [ԶԱՐԴԱՐ]ԵՑԻ ՈՍԿԻՈՎ ԵԻ ԱՐԾԱԹԻՈՎ ԵԻ ԱԿԱՄԲԲ ՊԱՏ-
10. [ՈՒԱԿԱՆ]ԱԻՔ ԵԻ ԵՏՈՒ ԱԻԵՏԱՐԱՆ ԵԻ ՏԱԻՆԱԿԱՆ ԵԻ ՆՈՐ-
11. [ՈԳԵՑԻ Հ]ԻՆ ԵԻ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱԻՔ ԵԻ ԿԱՆԳՆԵՑԻ ՄԻԼ ԱՌ
12. [ՍՈՒՐԲ Փ]ՐԿԻԶՍ: ԱՐԴ ԵԹԵ ՈՔ Ի ՄԵԾԱՑ ԿԱՄ Ի ՓՈՔՈՒՆՑ
13. [ԽԼԷ Ի ՍՊ]ԱՍՈՒՑՍ ԵԻ ԿԱՄ ՅԱՅԼ ԻՐԱՑՍ, ՈՐ ԵՏՈՒ ԵԻ ՅԱՓՇՏԱ-
14. [Կ ԱՆՈՂ]ԻՍ ԽԱՓԱՆ ԼԻՆԻ, :ՅԺԸ: ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ ՆԶՈՎԵԱԼ ԼԻՑԻ:
15. [ՅԵՏ ԵԼԻ]Ց ԻՄՈՅ ՅԱՇԽԱՐՀԷՍ ԵԴԻ ԼՈՒԾ Ի ՎԵՐԱ ՍՊԱՍԱԻՈՐԱՑ Ե-
16. [ԿԵՂԵՑՈՅ]Դ՝ ԶՎԱՐԴԵՎԱՐԻՆ :Խ: ՈՐՆՍՆ ԱՆԽԱՓԱՆ ԿԱՏԱՐԵԼ ՄԻՆ-
17. [ԶԵԻ Ի ԳԱԼՈՒՍ]ՏՆ ՔԻ, ԸՆԴ ՆՄԻՆ ԵԻ Զ[ՄԵ]ԶՆ Զ[ՐԱ]Դ ԱՐԵՑԻՆ
18. [ՅԱՆՈՒՆ] ՈՐԴԻՈ ԳԱԳԱՍ ՍՄՊԱՏԱ ՇԱՀՆՇԱՀԻ ԱՐՈՅՆ
19. [ԵԹԵ ՈՔ] ԳՐՈՒԱԾՍ ԻՄՈ ԶԱՌՆԷ ԵՐԻՍ ԱՆԻՄԻՑԴ ՊԱՐՏԱ-
20. [ԿԱՆ ԼԻՑԻ ԻՍԿ ԿԱՏԱՐԻԶ ԳՐԻՍ ԱԻՐՀՆԵԱԼ ԼԻՑԻ ԿԱՄ ԵՂԻՑԻ]: ԱՄԵՆ:

⁸ Այդ արտահայտությունը շատ տարածված էր XI—XIII դարերի արձանագրություններում և հիշյալ արձանագրությունից բացի նույն եկեղեցու պատերին հանդիպում է ևս երկու անգամ (տե՛ս «Դիվան հայ վիմագրության», I, էջ 45—47):

⁹ «Դիվան հայ վիմագրության», I, էջ 44—45: Այստեղ ավարտվում է 2. Օրբելու հրատարակությունը:

Ինչ վերաբերում է 1035 թ. արձանագրությանը, ապա այն անհամեմատ լավ վիճակում էր: 1957 թ., եկեղեցու հյուսիսային կեսը ավերվեց: Ներկայումս արձանագրությունը գոյություն չունի:

Բացի շինության մասին տեղեկացնելուց, այս արձանագրությունները հետաքրքիր տվյալներ են հաղորդում նաև հիշատակված անձանց և առանձնապես Ապղարիբի վերաբերյալ: Ըստ 1035 թ. արձանագրության¹⁰ Ապղարիբը, հրովարտակ ստանալով Սմբատ թագավորից, գնացել է հունաց Միիել կայսեր մոտ ու հաշի մասունքներ բերելու: 1036 թ. արձանագրությունն ավանդում է, որ Պետրոս կաթողիկոսի օրոք Գրիգորի որդի և Ապուղամրի թոռ Ապղարիբը, Վահրամ և Վասակ Պահլավունիների եղբայրը, մեծ ծախսերով կառուցեց Ս. Փրկիչ եկեղեցին և բազմաթիվ նվիրատվություններ կատարեց: Երկու արձանագրություններն էլ խոսում են եկեղեցու շինության մասին: Բայց քանի որ դրանք թվագրված են տարբեր տարեթվերով, ուստի բնականորեն հարց է առա-

ջանում, թե դրանցից ո՞րն է իսկականը: Եթե եկեղեցին կառուցվել է 1036 թ., ապա ինչո՞վ բացատրել 1035 թ. արձանագրության առկայությունը: Մեր կարծիքով անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ արձանագրությունները ոչ միայն նույն բովանդակությունն ունեն, այլև մեկը մյուսին լրացնում են հաղորդած տեղեկությունների մանրամասներում: մեկում խոսվում է Ապղարիբի հոգևոր գործունեության և եկեղեցու շինության մասին, իսկ մյուսում՝ եկեղեցու շինության, նվիրատվությունների և Ապղարիբի ծագման մասին: Միանգամայն պարզ է, որ չավարտված եկեղեցու վրա շինության մասին չէին գրի: Պարզ է նաև, որ վանքին նվիրատվություններ անելու արարողությունը պետք է տեղի ունենար եկեղեցու շինությունից հետո, իսկ նվիրատվական ցանկը բերված է միայն երկրորդ արձանագրության մեջ, առաջինում այդ մասին ոչ մի խոսք չկա: Այստեղից հասկանալի է դառնում, որ եկեղեցին կառուցվել է 1035 թ. և այդ առթիվ կազմվել է արձանագրություն, բայց նվիրատվություն չի կատարվել: Հաջորդ տարին՝ 1036 թ. Ապղարիբը կատարում է իր նվիրատվությունը, որի առիթով շինության փաստը վավերացվում է երկրորդ անգամ: Քանի որ շինության և նվիրատվության պարագան դիտվել է որպես միասնական ակտ, ուստի շինության հանգամանքը հիշատակվել է երկրորդ անգամ:

Ա. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

¹⁰ Այս արձանագրությունն առաջին անգամ հրատարակել է Ս. Զալալյանցը (տե՛ս «Ճանապարհորդություն...», էջ 7, 8), այնուհետև Ն. Սարգիսյանը («Տեղագրություն...», էջ 121), Ղ. Ալիշանը («Շիրակ», էջ 82), Բրոսսեն («Les ruines d'Ani», SPb 1860—1861, I, էջ 19), Առավել ստույգ և գիտական հրատարակությունը Հ. Ա. Ծրբելունն է (տե՛ս «Դիվան հայ վիմագրության», I, էջ 45—46):